Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Բայանդուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության /8 դասաժամ/, հասարակագիտություն /7 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել .

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3x4 չափի)
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն /ձև 5/,
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15.00-ին,** ՀՀ Շիրակի մարզի «Բայանդուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցե - Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Բայանդուր, փ. 8, 9 շ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /094/ 09-80-20 հեռախոսահամարով: